● ՌԵՊԼԻԿ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

ԻՆՉ ԱՐԺԵ «ՄԵԾ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԻ» ԽՈՍՏՈՒՄԸ

1973 թ. կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կազմակերպության հերթական կոնֆերանսը ողջունելու էին եկել Ստեփանակերտ քաղաքի պիոներները: Նրանք իրենց ողջույնի խոսքում խնդրեցին Ստեփանակերտում կառուցել պիոներական պալատ: Հեյդար Ալիևը, որը մասնակցում էր այդ կոնֆերանսին, իր ելույթում խոստացավ պիոներներին հենց այդ նույն տարում Ստեփանակերտում սկսել պիոներական պալատի շինարարությունը:

«Մեծ ինտերնացիոնալիստի» այդ «հայրական» հոգատարության մասին գրեցին բոլոր թերթերը: Շնորհակալական խոսք ասվեց մարզի բոլոր ամբիոններից, սակայն... Հեյդար Ալիևը վերադառնալով Բաքու, Ստեփանակերտը «շփոթեց» Նախիջևանի հետ: Նույն տարում սկսվեց և հաջորդ տարում ավարտվեց Նախիջևանի պիոներական պալատի շինարարությունը: Իսկ Ստեփանակերտում դադարեցվեց 1978 թվականին սկսված մանկական մարզական դպրոցի շինարարությունը: Այդ օբյեկտը, հնգամյակից հընգամյակ տեղափոխվելով, առ այսօր չի կառուցվել: Ինչ մնում է պիոներական պալատին, կոնֆերանսը ողջունած պիոներները վաղուց հասունացել են, դարձել են հայրիկներ, մայրիկներ, և վաղը նրանց երեխաները կկրեն կարմիր վզկապներ: Պիոներ կդառնա հաջորդ տերունդը, բայց առ այսօր Ստեփանակերտում ոչ միայն պիոներական պալատ չկա, այլև միակ պիոներական տունը շարունակում է տեղավորված մնալ մի անհարմարավետ շենքի անհարմարավետ սենյակում: Այսպես, ստեփանակերտցի կարմիր վզկապավորները զրկված են պիոներական օջախից, մանկական մարզական դպրոցից: Ի՞նչ ունեն նրանք. մի մանկական գրադարան, այն էլ՝ վթարային: Եթե այսօր չէ, ապա վաղը կփլվի: Այդպիսի վիճակում միայն գրադարանի շենքը չէ. անցած տարվա վերջերին ճաք տվեց և փլվեց քաղաքի № 1 հայկական միջնակարգ դպրոցը: Այն չի վերակառուցվում, որովհետև մարզն այժմ էլ շրջափակված է «ինտերնացիոնալիստ» հեյդարականների կողմից:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ



ՆԿԱՐՈՒՄ.— Ստեփանակերտի մանկական մարզական դպրոցն այսօր: Կառույցը սկսվել է 1974 թ. և դադարեցված է նրա շինարարությունը:

Լուսանկար՝ Դ. ՕՀԱՆՅԱՆԻ